IDEA

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ

## ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**հուլիս 2006-փետրվար 2007**
**մինչև դեկտեմբեր 2007թ հեռանկարով**

Սույն փաստաթղթում ներկայացվում է ընտրական հանձնաժողովների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման համար ուսուցանող-կրթողների ուսուցման ռազմավարությունը: Այս ռազմավարությունում մանրամասն ամրագրված են 2006թ-ի հուլիսից մինչև 2007թ-ի փետրվար իրականացվելիք քայլերը: Այստեղ առաջարկներ են ներկայացվում այս ժամկետից հետո իրականացվելիք քայլերի մասին, որոնք կապահովեն ընտրական վարչարարության մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման շարունակականությունը:

Սույն ռազմավարությունը կազմվում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի և International IDEA-ի միջև փոխհամագործակցության համաձայնագրի և «Կայուն ժողովրդավարության զարգացումը Հայաստանում. ընտրական վարչարարության հմտությունների կատարելագործում և քաղաքական մասնակցություն» ծրագրի շրջանակում, և ենթակա է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ համաձայնեցման:

## Ա. Նախաբան

Հայաստանի ընտրական հանձնաժողովներում (ԿԸՀ, ԸԸՀ և ՏԸՀ) ընդհանուր առմամբ ընդգրկվում են մոտ 20500 քաղաքացիներ, որոնցից 9-ը ԿԸՀ անդամներ՝ 369-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամներ և մինչև 20000-ը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ:

ՀՀ Ընտրական հանձնաժողովների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման իրավական հիմքերն են հետևյալ իրավական ակտերը՝ ՀՀ Ընտրական օրենսգիրքը, ինչպես նաև ԿԸՀ 2005թ Օգոստոսի 4-ի N42-Ն (լրացված 2006թ հունվարի 11-ին, N 1-Ն) որոշումը «Ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու և որակավորումներ շնորհելու կարգը սահմանելու մասին» և 2005թ դեկտեմբերի 21-ի N50-Ա որոշումը «Ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների մասնագիտական դասընթացների ամենամյա ծրագիրը և գրաֆիկը հաստատելու մասին»:

Մասնավորապես, ՀՀ Ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1 կետի համաձայն՝ «Ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվում են ՀՀ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները, որոնք կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցել

են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել են որակավորման վկայականներ»:

Իսկ ԿԸՀ վերոնշյալ երկու որոշումները սահմանում են դասընթացների ժամկետները, տևողությունը, ծրագիրը, հնարավոր մասնակիցների ցանկը, ինչպես նաև ֆինանսավորման կարգը:

## Բ. Նպատակ

Սույն ռազմավարությունը նպատակ ունի ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի և International IDEA-ի համագործակցությամբ

- ապահովել ընտրական հանձնաժողովների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական կատարելագործումը, որը կնպաստի ընտրական գործընթացի բարելավմանը ՀՀ-ում,
- մշակել և պատրաստել ուսումնական ծրագիր և նյութեր ՀՀ ընտրական հանձնաժողովների անդամների և անդամության թեկնածուների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման համար՝ BRIDGE*-ի մեթոդաբանության հիման վրա,
- կրթել և ուսուցանել մինչև 25 Հայաստանի քաղաքացի/բնակիչ ուսուցանողներ-կրթողներ ընտրական հանձնաժողովների անդամների և անդամության թեկնածուների շարունակական ուսուցումն իրականացնելու համար:

## Գ. Հիմնական սկզբունքներ

ՀՀ ընտրական հանձնաժողովների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական կատարելագործումն ապահովելու համար այս գործընթացի իրականացումը կապահովվի ԿԸՀ-ը:

Սույն ռազմավարության արդյունավետ իրականացման համար նախատեսվում է

- 20-25 Հայաստանի քաղաքացի/բնակիչ ուսուցանող-կրթողների թեկնածուների ընտրություն՝ վերջիններիս որպես ընտրական հանձնաժողովների ուսուցող-կրթողներ պատրաստելու համար: Այս ընտրությունը կատարում է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը՝ բաց մրցույթի միջոցով:
- Ընտրված ուսուցանող-կրթողների թեկնածուները ուսուցանվում և միջազգային որակավորում են ստանում երկշաբաթյա BRIDGE դասընթացի միջոցով:
- Ընտրված, ուսուցանված և որակավորում ստացած ուսուցանող-կրթողները պարտավոր են առաջարկի դեպքում աշխատել և գործակցել ԿԸՀ-ի հետ ՝ 3 տարվա ընթացքում, ԿԸՀ-ի և ուսուցանող-կրթողների միջև կնքված պայմանագրի հիման վրա:
- Որակավորում ստացած ուսուցանող-կրթողների տվյալները կտեղադրվեն ԿԸՀ ինտերնետային կայքում: ԿԸՀ-ն ընտրական հանձնաժողովների անդամների և թեկնածուների մասնագիտական ուսուցման դասընթացներ կազմակերպելիս դասախոսական կազմում կընդգրկի նաև BRIDGE կրթական ծրագրով որակավորում ստացած ուսուցանող-կրթողներին: ԿԸՀ-ը նաև խորհուրդ կտա ընտրական հանձնաժողովների անդամների և անդամության թեկնածուների մասնագիտական վերապատրաստումներ անցկացնող/կազմակերպող այլ կառույցների՝ իրենց

---

* BRIDGE (Building Resources in Democracy, Governance and Elections)-ը՝ ժողովրդավարության, կառավարման և ընտրական ռեսուրսների պատրաստում, միջազգային կրթական ծրագիր է՝ կազմված International IDEA-ի, Ավստրիայի ընտրական հանձնաժողովի (AEC) և ՄԱԿ-ի Ընտրական օժանդակության ստորաբաժանման (UN-EAD) կողմից 1999թ-ին: BRIDGE-ը ընտրություն կազմակերպող մարմինների համար կազմված համապարփակ և համեմատական նորարար կրթական ծրագիր է՝ կազմված հենց ընտրական կառավարման մարմինների և կրթողների կողմից:

ուսուցանողների կազմում ընդգրկել BRIDGE կրթական ծրագրով որակավորում ստացած ուսուցանող-կրթողներին:

## Դ. Հիմնական աշխատանքներ

1. Ուսուցանող-կրթողների թեկնածուներին ընտրող հանձնաժողովի կազմավորում – 16-25 հոկտեմբեր 2006

Հանձնաժողովը կազմված կլինի 3 անդամից, որոնցից մեկին կնշանակի International IDEA-ի հայաստանյան դիվանագիտական գրասենյակը, երկուսին՝ ԿԸՀ-ը,: Ցանկալի է, որ հանձնաժողովի անդամները լինեն «Կայուն ժողովրդավարության զարգացումը Հայաստանում. ընտրական վարչակազմի հմտությունների կատարելագործում և քաղաքական մասնակցություն» ծրագրի կորիզ խմբի անդամներ:

Հանձնաժողովը կունենա հետևյալ լիազորություններն ու պարտականությունները՝

- Ներկայացված դիմումների ընդունում 2-րդ կետում նշված չափանիշներին համապատասխան (դիմումները կներկայացվեն ԿԸՀ աշխատակազմ):
- Ներկայացված դիմումների և փաստաթղթերի ուսումնասիրում և թեկնածուների նախնական ընտրություն:
- Նախնական ընտրության արդյունքում ընտրված թեկնածուների հետ հարցազրույցի անցկացում:
- Հարցազրույցի արդյունքում թեկնածուների ընտրություն:

Հանձնաժողովի որոշումները կայացվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի որոշումներն իրավազոր են բոլոր 3 անդամների ներկայության դեպքում: Հանձնաժողովն ինքը կսահմանի իր աշխատակարգը:

2. Դիմում ուսուցողական դասընթացին մասնակցելու համար – 31 հոկտեմբեր-14 նոյեմբեր 2006

Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի և բնակիչ իրավունք ունի դիմելու ընտրական հանձնաժողովների անդամների և անդամության թեկնածուների ուսուցանող-կրթողների դասընթացին մասնակցելու համար, եթե համապատասխանում է հետևյալ պահանջներին՝

- առնվազն 21 և ոչ ավելի քան 55 տարեկան է
- ունի բարձրագույն կրթություն
- տիրապետում է հայերենին (գրավոր և բանավոր)

Դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Լրացված դիմումի ձևը *(հավելված 3)*
- Ինքնակենսագրություն (CV)
- Անձնագրի և դիպլոմի պատճենները

Մասնակիցների ընտրության չափանիշները

Ցանկալի է, որ դիմորդն ունենա՝

- ընտրական փորձ
- դասավանդման փորձ
- Հայաստանի ընտրական և իրավական դաշտի իմացություն
- կազմակերպչական հմտություններ
- քաղաքացիական և հասարակական գործունեության փորձ
- հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտություններ

- ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն

Ընտրության ժամանակ կհարգվեն նաև մասնակիցների աշխարհագրական ներկայացուցչությունը և գենդերային հավասարակշռությունը:

3. <u>Ուսուցողական դասընթացի մասնակիցների ընտրություն – 1 նոյեմբեր - 20 դեկտեմբեր 2006</u>

Ընտրության գործընթացը կազմված կլինի երկու փուլից՝
- Ներկայացված դիմումների և փաստաթղթերի ուսումնասիրում և նախնական ընտրություն
- Հարցազրույցների անցկացում առաջին փուլն անցած թեկնածուների հետ:

Դիմումների ուսումնասիրման կարգը և ժամանակացույցը կսահմանի ուսուցանող-կրթողների թեկնածուներին ընտրող հանձնաժողովը:

Առաջին փուլն անցած դիմորդների հետ կանցկացվի հարցազրույց: Հարցազրույցի նպատակն է ընտրել ընտրական հանձնաժողովների անդամների և անդամության թեկնածուների ապագա ուսուցանող-կրթողներ: Հարցազրույցը կանցկացվի հանձնաժողովի կողմից նախապես սահմանված թեմաների և հարցադրումների շրջանակում:

4. <u>Ընտրված մասնակիցների ուսուցանում՝ BRIDGE կրթական ծրագրով - 15-30 հունվար 2007</u>

Ընտրության երկու փուլերի արդյունքում ընտրված թեկնածուները կմասնակցեն ուսուցանող-կրթողների ուսուցման երկշաբաթյա BRIDGE դասընթացի *(BRIDGE կրթական ծրագրի համառոտ նկարագիրը՝ Հավելված 4):* Դասընթացը կազմակերպվելու է այնպես, որ բացի ընտրական սկզբունքներից և միջազգային փորձից այն ավարտողները տիրապետեն ՀՀ ընտրական օրենսգրքին, ԿԸՀ որոշումներին և ՀՀ-ում ընտրությունների անցկացման ընթացակարգերին: Դասընթացին ամբողջությամբ գործուն կերպով ներգրավված մասնակիցները կստանան ընտրական հանձնաժողովների ուսուցանող-կրթողի միջազգային BRIDGE որակավորման ստորին աստիճանը *(Ուսուցանող-կրթողների որակավորման աստիճանակարգը՝ Հավելված 5)*:

Նախատեսվում է, որ բացի Հայաստանյան մասնակիցներից BRIDGE դասընթացին կհրավիրվեն նաև մինչև 5 օտարերկրացի մասնակիցներ (իրենց սեփական ծախսերով), որն առավել հարուստ և համապարփակ կդարձնի ծրագիրը:

5. <u>Ուսուցանող-կրթողների աշխատանքը - փետրվար 2007-ից</u>

Որակավորում ստացած ուսուցանող-կրթողները պետք է 3 տարվա ընթացքում պատրաստ լինեն համագործակցել ԿԸՀ-ի հետ ընտրական հանձնաժողովների անդամների և անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացների կազմակերպման գործում, ԿԸՀ-ի առաջարկով՝ պայմանագրային հիմունքներով:

## Ե. Ժամանակացույց

| | |
|---|---|
| ընտրող հանձնաժողովի կազմավորում | 16-18 հոկտեմբեր 2006 |
| ընտրության կարգի և ընթացակարգերի մշակում հանձնաժողովի կողմից | 18-25 հոկտեմբեր 2006 |
| հայտարարության հրապարակում | 31 հոկտեմբեր 2006 |

| | |
|---|---|
| դիմումների ընդունում | 1-14 նոյեմբեր 2006 |
| դիմումների ուսումնասիրում և առաջին փուլով ընտրություն | 15 -30 նոյեմբեր 2006 |
| հարցազրույցների անցկացում և վերջնական ընտրություն | 1-15 դեկտեմբեր 2006 |
| ընտրության արդյունքների հրապարակում | 15-20 դեկտեմբեր 2006 |
| ուսուցողական-կրթական դասընթացի անցկացում | 15-30 հունվար 2007 |

## Զ. Ակնկալվող արդյունքներ

Սույն ռազմավարության իրականացման արդյունքում ակնկալում ենք ՀՀ ընտրական հանձնաժողովների անդամների և անդամության թեկնածուների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործում, որի արդյունքում կունենանք

- նյութեր և ուսուցողական ծրագիր
- մինչև 25 ուսուցանող-կրթողների բազա՝ միջազգային որակավորմամբ
- հնարավորություն տեղական ուժերով (առանց միջազգային փորձագետների ներգրավման) կազմակերպել ընտրական հանձնաժողովների համար միջազգային մակարդակով ընդունված ուսուցողական դասընթացներ:

## Է. Ռեսուրսներ

Սույն ռազմավարության իրագործման համար հարկ է

- **մարդկային ռեսուրսներ**

BRIDGE ծրագրի որակավորմամբ (հնգաստիճան համակարգի առնվազն 4-րդ աստիճանի) 2-4 ուսուցանողներ՝ մինչև 25 մարդու համար ուսուցողական դասընթաց կազմակերպելու համար: Ինչպես նաև 1-ին աստիճանի 1 ուսուցանող՝ միջազգային որակավորում շնորհելու համար: Այս անհրաժեշտ մարդկային ռեսուրսներն ապահովում է International IDEA միջկառավարական կազմակերպության հայաստանյան դիվանագիտական գրասենյակը:

- **ֆինանսական ռեսուրսներ**

Այս ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովում է International IDEA միջկառավարական կազմակերպության հայաստանյան դիվանագիտական գրասենյակը:

## Ը. Հետագա քայլեր շարունակականությունն ապահովելու համար

Հայաստանում ընտրական հանձնաժողովների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման շարունակական գործընթաց ապահովելու համար փետրվար 2007թ-ից հետո՝ ընտրությունների անցկացման նախօրյակին, ընտրական հանձնաժողովների անդամների գիտելիքները, ինչպես նաև հնարավոր օրենսդրական փոփոխությունները ներկայացնելու համար նպատակահարմար է անցկացնել ընտրական հանձնաժողովների վերապատրաստման դասընթացներ:

- **Ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստում**

Նկատակահարմար է ընտրական հանձնաժողովների վերապատրաստման դասընթացներն անցկացնել

- ՏԸՀ-ների համար (20000 անդամ)՝ ընտրություններից 20-5 օր առաջ, 1 օր՝ 4 ժամ տևողությամբ
- ԸԸՀ-ների համար (369 անդամ)՝ ընտրություններից 60-25 օր առաջ, 2 օր՝ 4-ական ժամ տևողությամբ:

Ելնելով սույն ռազմավարությունից՝ 2007թ մարտ-մայիս ամիսներին մինչև 25 ուսուցանող-կրթողները կկարողանան վերապատրաստել ԸԸՀ-ների անդամներին՝ 2007թ մայիսի Ազգային ժողովի ընտրությունների նախօրյակին:

- **Ուսուցանող-կրթողների բազայի մեծացում**

Սույն ռազմավարության արդյունավետ իրականացման արդյունքում կարող է ընդլայնվել ուսուցանող-կրթողների բազան՝ մինչև 100 ուսուցանող-կրթող՝ համապատասխան որակավորման աստիճանակարգով (տես որակավորման աստիճանակարգը՝ *Հավելված 5)*

**Հավելվածներ**

*I. ՀՀ ԿԸՀ 2005թ հունվարի 11-ի որոշում N 1-Ն*
*II. ՀՀ ԿԸՀ 2005թ դեկտեմբերի 21-ի որոշում N 50-Ա*
*III. Ուսուցանող-կրթողների ուսուցողական դասընթացի դիմումի ձև*
*IV. BRIDGE կրթական ծրագրի համառոտ նկարագիրը*
*V. Ուսուցանող-կրթողների որակավորման աստիճանակարգ*

ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿԱԶՄՎԵԼ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ է ԵՐԵՎԱՆՈՒՄ

2006 թ Հոկտեմբեր 6 ԻՆ

**International IDEA-ի** կողմից՝

Անուն: **Արմինէ Առաքելեան**

Պաշտոնը: **Լիազոր ներկայացուցիչ և հայաստանյան գրասենյակի ղեկավար**

Ստորագրություն:_____

ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿԱԶՄՎԵԼ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ է ԵՐԵՎԱՆՈՒՄ

2006 թ Հոկտեմբեր 7 - ԻՆ

**ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ)** կողմից՝

Անուն: **Գարեգին Ազարյան**

Պաշտոնը: **ԿԸՀ Նախագահ**

Ստորագրություն:_____

Հավելված 1

*Գրանցված է*
*ՀՀ արդարադատության*
*նախարարության կողմից*
*18 հունվարի 2006թ.*
*Պետական գրանցման թիվ 60606011*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

**11 հունվարի 2006թ.** **N 1-Ն**
**ք.Երևան**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի 26-րդ ենթակետով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2005 թվականի օգոստոսի 4-ի «Ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու և որակավորումներ շնորհելու կարգը սահմանելու մասին» N 42-Ն որոշմամբ սահմանված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 3-րդ կետում.

ա) «ինչպես նաև» բառերը հանել.

բ) «անձինք» բառից հետո լրացնել «, ինչպես նաև որակավորման ստուգարք հանձնած քաղաքացիները» բառերը:

2) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում է.

ա) դասընթացներ անցկացնող դասախոսը,

բ) կենտրոնական կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կամ Աշխատակազմի ներկայացուցիչը:»:

4) 18-րդ և 19-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

5) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ, նոր $20^1$, $20^2$ ,$20^3$ կետերով.

«$20^1$. Որակավորման ստուգարքն անցկացվում է բանավոր՝ հարցատոմսի միջոցով: Հարցատոմսերը կազմվում են դասընթացներ անցկացնող ուսումնական հաստատության կողմից՝ դասընթացի ծրագրի սահմաններում, յուրաքանչյուր հարցատոմսում երեք հարց:

Ստուգարքի արդյունքում հանձնաժողովի անդամը ստանում է դրական (ստուգված) կամ բացասական (չստուգված) գնահատական:

$20^2$. Պատասխանի վերաբերյալ որակավորման հանձնաժողովի անդամների տարաձայնության դեպքում ընդունվում է հանձնաժողովի անդամի համար նախընտրելի տարբերակը:

$20^3$. Հանձնաժողովի անդամը կարող է բողոքարկել ստուգարքի արդյունքում ստացած գնահատականը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. Ազարյան

*Գրանցված է*
*ՀՀ արդարադատության*
*նախարարության կողմից*
*16 օգոստոսի 2005թ.*
*Պետական գրանցման թիվ 60605329*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

4 օգոստոսի 2005թ. N 42-Ն
ք.Երևան

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի 26-րդ ենթակետով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Սահմանել ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու և որակավորումներ շնորհելու կարգը (Հավելված1):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.Ազարյան

*Հավելված 1*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2005թ. օգոստոսի 4 -ի թիվ 42 -Ն որոշման*

# ԿԱՐԳ

## Ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու և որակավորումներ շնորհելու

### 1.Ընդհանուր դրույթներ

1. Ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների (այսուհետ՝ հանձնաժողովների անդամներ) համար մասնագիտական դասընթացներ (այսուհետ՝ դասընթացներ) կազմակերպելու նպատակը հանձնաժողովի անդամների՝ ընտրությունների անցկացման համար համապատասխան գիտելիքների ուսուցումն է և նրանց աշխատանքային ունակությունների կատարելագործումը:

2. Դասընթացներին կարող են մասնակցել ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

3. Դասընթացներին չեն կարող մասնակցել Ազգային ժողովի պատգամավորները, Սահմանադրական դատարանի անդամները, նախարարները և նրանց տեղակալները, մարզպետները, Երևանի քաղաքապետը, համայնքների ղեկավարները, ազգային անվտանգության, ոստիկանության և պաշտպանության գերատեսչությունների, դատախազության, բանկային համակարգի աշխատակիցները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154 հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք:

4. Դասընթացների կազմակերպումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ հատկացված գումարների սահմաններում:

5. Դասընթացներ անցկացնող ուսումնական հաստատությունները (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) որոշվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան անցկացված գնման ընթացակարգի արդյունքների հիման վրա:

### 2. Մասնագիտական դասընթացների կազմակերպման ընթացակարգը

6. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանձնաժողովի անդամների համար դասընթացների կազմակերպման վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակում է հայտարարություն տվյալ դասընթացը սկսելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

7. Հայտարարության մեջ նշվում է.

ա/ դասընթացներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիներին ներկայացվող պահանջները.

բ/ փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը, որը պետք է լինի տվյալ դասընթացի մասին հայտարարության առաջին հրապարակումից առնվազն 15 օր հետո, դիմումներ ներկայացնելու վայրը և հեռախոսահամարը.

գ/ դասընթացի սկսելու օրը, ժամը, վայրը:

8. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների) կողմից վարվում են դասընթացներին մասնակցող քաղաքացիների դիմումների հաշվառման մատյաններ, որտեղ նշվում են դիմումի գրանցման համարը և ամսաթիվը, դիմումատուի անունը, ազգանունը, հայրանունը, մասնագիտական դասընթացի ժամկետները:

9. Դասընթացների խմբերը ձևավորվում են ներկայացված դիմումների հերթականությամբ:

10. Դասընթացները կազմակերպվում են տարին առնվազն մեկ անգամ՝ ըստ Երևան քաղաքի, իսկ մարզերում՝ ըստ ընտրատարածքների:

11. Դասընթացին մասնակցելու համար քաղաքացին ներկայացնում է՝

ա/ սույն կարգի թիվ 1 հավելվածով հաստատված ձևի դիմում.

բ/ անձնագրի պատճեն:

12. Յուրաքանչյուր դասընթացի տևողությունը պետք է լինի ոչ պակաս, քան 16 ակադեմիական ժամ:

13. Դասընթացներ անցկացնող դասախոսական կազմում կարող են ընդգրկվել նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամներ, «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Աշխատակազմ) աշխատակիցներ և այլ ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագետներ:

14. Դասընթացներն անցկացվում են ուսումնական հաստատության կողմից ներկայացված և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան գրաֆիկի համաձայն:

Տարեկան գրաֆիկի հիման վրա կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և ուսումնական հաստատության ղեկավարը համատեղ կազմում են մասնագիտական դասընթացների անցկացման ժամանակացույց:

15. Դասընթացների ծրագիրը ընդգրկում է հետևյալ իրավական ակտերը.

ա/ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն.

բ/ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք.

գ/ «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

դ/ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք. (կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար)

ե/ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներ:

## 3. Որակավորման ստուգարք ընդունող հանձնաժողովները

16. Հանձնաժողովների անդամներին որակավորում շնորհելու համար ուսումնական հաստատության կողմից ստեղծվում է որակավորման ստուգարք ընդունող հանձնաժողովներ (այսուհետ՝ որակավորման հանձնաժողով):

17. Որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում է.

ա/ դասընթացներ անցկացնող ուսումնական հաստատության,

բ/ ուսումնական հաստատության կողմից ընտրված Հայաստանի Հանրապետության հասարակական այն կազմակերպությունների, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.

գ/ կենտրոնական կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կամ Աշխատակազմի մեկական ներկայացուցիչ:

18. Հասարակական կազմակերպություններից, կենտրոնական կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից կամ Աշխատակազմից որակավորման հանձնաժողովի կազմում առաջադրվող անդամության թեկնածուների ցուցակները ներկայացվում են ուսումնական հաստատություն՝ համակարգչում զետեղելու համար:

19. Որակավորման հանձնաժողովը կազմվում է համակարգչում նախօրոք զետեղված և համակարգչի կողմից ընտրված 3 անդամից՝ որակավորման ստուգարքն անցկացնելուց առնվազն 24 ժամ առաջ:

## 4. Որակավորում շնորհելու ընթացակարգը

20. Որակավորման ստուգարքն անցկացվում է դասընթացների ավարտից հետո՝ 7 օրվա ընթացքում, որի արդյունքում քաղաքացին կարող է ստանալ որակավորման վկայական (Հավելված2):

Որակավորման վկայականը տրվում է մինչև երեք տարի ժամկետով:

21. Դասընթացի ավելի քան մեկ երրորդին չմասնակցելու դեպքում հանձնաժողովի անդամին չի թույլատրվում մասնակցել որակավորման ստուգարքին:

22. Որակավորման ստուգարքին չներկայացած հանձնաժողովի անդամը իրավունք ունի մասնակցելու անցկացվող հաջորդ ստուգարքներին:

23. Որակավորման վկայականում նշվում են՝

ա/ որակավորման ստուգարք հանձնած հանձնաժողովի անդամի անունը, հայրանունը, ազգանունը,

բ/ որակավորման վկայականը տվող ուսումնական հաստատության անվանումը,

գ/ որակավորման վկայականի համարը,

դ/ որակավորման վկայական տալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը,

ե/ որակավորման վկայականն ուժի մեջ լինելու ժամկետը:

Որակավորման վկայականը վավերացվում է ուսումնական հաստատության ղեկավարի ստորագրությամբ և ուսումնական հաստատության կնիքով:

24. Որակավորման վկայականի ժամկետը լրանալուց հետո, որակավորման նոր վկայական ստանալու համար, քաղաքացին մասնակցում է միայն որակավորման ստուգարքին:

25. Որակավորման վկայականները կարող են ուժը կորցրած ճանաչվել սույն կարգի 15-րդ կետում նշված իրավական ակտերը փոփոխվելու դեպքում՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

26. Ուսումնական հաստատության կողմից վարվում են տրված որակավորման վկայականների հաշվառման մատյաններ, որտեղ նշվում են որակավորման վկայական ստացած հանձնաժողովի անունը, ազգանունը, հայրանունը, որակավորման ստուգարքի արդյունքում ստացված որակավորման վկայականի համարը, որակավորման վկայականի տրման և ուժի մեջ լինելու ժամկետները: Որակավորման վկայականը ստանալիս հանձնաժողովի անդամը ստորագրում է հաշվառման մատյանում:

27. Որակավորման վկայականի կորցնելու կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում հանձնաժողովի անդամը դիմում է ներկայացնում համապատասխան ուսումնական հաստատություն՝ վկայականի կրկնօրինակը ստանալու համար:

Ուսումնական հաստատությունը վկայականի կրկնօրինակը հանձնաժողովի անդամին տրամադրում է դիմելուց հետո՝ 3 օրվա ընթացքում, որի վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում ուսումնական հաստատության տրված որակավորման վկայականների հաշվառման մատյանում:

Որակավորման վկայականի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

28. Ուսումնական հաստատությունը յուրաքանչյուր որակավորման ստուգարքից հետո՝ եռօրյա ժամկետում, կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում տեղեկանք /նաև էլեկտրոնային կրիչով/ որակավորման վկայական ստացած քաղաքացիների վերաբերյալ:

29. Դասընթացներ անցած և որակավորման վկայական ստացած քաղաքացիների վերաբերյալ տեղեկությունները տեղադրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի Ինտերնետային կայքում:

## 5. Անցումային դրույթներ

30. Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների դասընթացները կազմակերպվում են սկսած 2005թ. սեպտեմբերի 1-ից:

31. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար դասընթացները կազմակերպվում են 2006թ. հունվարի 1-ից և պետք է ավարտվեն մինչև 2007թ. մարտի 1-ը, այն հաշվարկով, որ 2007 թվականի համապետական ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվեն դասընթացներ անցած և որակավորման վկայականներ ստացած քաղաքացիներով:

Սույն կետի պահանջը ապահովելու նպատակով կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող է դասընթացների անցկացմանը պայմանագրային հիմունքներով ներգրավել այլ ուսումնական հաստատությունների դասախոսների:

32. Հանձնաժողովների անդամների համար առաջին մասնագիտական դասընթացներն անցկացնում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան:

Մարզերում (Երևան քաղաքում) դասընթացներ կազմակերպվում են տարին առնվազն 3 անգամ, մարզերում ըստ ընտրատարածքների՝ հաշվի առնելով ընտրատարածքում ընտրական տեղամասերի թիվը:

33. Հայաաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան մինչև 2005թ. հոկտեմբերի 1-ը կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար մասնագիտական դասընթացների անցկացման ծրագիրը:

34. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչև 2005թ. դեկտեմբերի 1-ը սահմանում է 2006 թվականին տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացների կազմակերպման և անցկացման գրաֆիկը՝ ըստ ընտրատարածքների (Երևան քաղաքի):

*Հավելված 1*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2005թ. օգոստոսի 4 -ի թիվ 42 -Ն որոշմամբ*
*հաստատված կարգի*

_____
(նշվում է մասնագիտական դասընթացներ կազմակերպող ուսումնական հաստատության անվանումը)

_____

# ԴԻՄՈՒՄ

Ընտրական հանձնաժողովների անդամների համար կազմակերպված մասնագիտական դասընթացներին մասնակցելու

_____
*(ազգանուն , անուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվ,)*

_____
*(անձնագրի սերիա, համար, ում կողմից է տրված)*

_____
*(բնակության վայրի հասցեն)*

_____
*(կրթությունը)*

_____
*(աշխատանքի վայրը և պաշտոնը)*

*Խնդրում եմ ինձ ընդգրկել* _____
*(նշվում է անցկացվող մասնագիտական դասընթացի ժամկետը և վայրը)*
*ընտրական հանձնաժողովների անդամների համար կազմակերպված մասնագիտական դասընթացներին:*

*Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154 հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար դատվածություն չունեմ:*

ԴԻՄՈՂ _____ _____
(ազգանուն) (ստորագրություն)

«____» _____ 200 թվական

*Հավելված 2*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2005թ. օգոստոսի 4 -ի թիվ 42 -Ն որոշմամբ*
*հաստատված կարգի*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ

# ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ *N 000000*

_____
/անուն, հայրանուն, ազգանուն/

*Անցել է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու իրավունք:*

_____

_____
(որակավորման վկայական տվող ուսումնական հաստատության անվանումը)

*Տրված է «____» _____ 200 թ.*

*Ուժի մեջ է մինչև՝ «____» _____ 200 թ.*

*Ուսումնական հաստատության*
*ղեկավար* _____
/ստորագրություն

Կ.Տ.

_____
*Վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:*

Հավելված թիվ 8 II

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

21 դեկտեմբերի 2005թ.
ք.Երևան

N 50-Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԳՐԱՖԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2005 թվականի օգոստոսի 4-ի թիվ 42-Ն որոշման 14-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

## ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ անցկացնելու ծրագիրը համաձայն թիվ 1 հավելվածի և 2006 թվականի մասնագիտական դասընթացների գրաֆիկը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. Ազարյան

*Հավելված 1*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2005թ. դեկտեմբերի 21-ի թիվ 50-Ն որոշման*

# ԾՐԱԳԻՐ

## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

| Ո | *Թեմաների անվանումը* | *Ժամեր* |
|---|---|---|
| I. | **Ընտրական իրավունքի սահմանադրական հիմունքները** | 1 |
| 1.1 | Անձի քաղաքացիության սահմանադրական հիմքերը | |
| 1.2 | Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը | |
| 1.3 | Ընտրական իրավունքի սկզբունքները | |
| 1.4 | Ընտրությունների տեսակները | |
| II. | **Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքը** | 1 |
| 2.1 | Իրավական ակտի հասկացությունը | |
| | • Իրավական ակտի հասկացությունը, էությունը և տեսակները՝ ըստ բնույթի<br>• Իրավական ակտերի համակարգը<br>• ՀՀ-ում ընտրական գործընթացը կարգավորող իրավական ակտերի տեսակները, դրանց տեղը և նշանակությունը՝ ընդհանրապես իրավական ակտերի համակարգում | |
| 2.2 | ՀՀ կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների իրավական ակտերը | |
| | • ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասությունը նորմատիվ իրավական ակտերի ընդունման գործում<br>• ՀՀ կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների տեսակները՝ ըստ բնույթի | |
| 2.3 | ՀՀ կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների իրավասությունը իրավական ակտերի ընդունման և պարզաբանման գործում | |
| | • ՀՀ կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների իրավասությունը իրավական ակտերի նախագծերի մշակման, ընդունման, փոփոխությունների, պետական գրանցման, հրապարակման գործում<br>• ՀՀ կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների իրավական ակտերի ուժի մեջ մտնելը և գործողության դադարումը | |
| 2.4 | ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումը | |
| | • ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասությունը իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումներ տալու գործում<br>• Իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումներ տալու կարգը | |

| | | |
|---|---|---|
| III. | ՀՀ օրենքը «Հանրաքվեի մասին» | 1 |
| 3.1 | Հանրաքվեի հասկացությունը և տեսակները | |
| 3.2 | «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը | |
| • | Ընդհանուր դրույթներ | |
| • | Հանրաքվեի անցկացման նախաձեռնությամբ հանդես գալը և հանրաքվեն նշանակելը | |
| • | Հանրաքվեի դրվող հարցերը հրապարակելը | |
| • | Հանրաքվեի ֆինանսավորումը | |
| • | Քարոզչությունը | |
| IV. | ՀՀ ընտրական օրենսգիրք | 9 |
| 4.1 | Ընդհանուր դրույթներ | |
| • | Հիմնական դրույթներ | |
| • | Ընտրողների ցուցակները | |
| • | Ընտրական տեղամասերը և տեղամասային կենտրոնները | |
| • | Ընտրատարածքները | |
| • | Նախընտրական քարոզչությունն | |
| • | Ընտրությունների ֆինանսավորումը | |
| • | Վառոդային զենքերը, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները | |
| 4.2 | Ընտրական հանձնաժողովներ | |
| • | Ընտրական հանձնաժողովների համակարգը և անդամների կարգավիճակը | |
| • | Ընտրական հանձնաժողովների կազմավորումը | |
| • | Ընտրական հանձնաժողովների լիազորությունները | |
| 4.3 | Քվեարկությունը և քվեարկության արդյունքների ամփոփումը | |
| • | Քվեարկության կազմակերպումը | |
| • | Քվեարկության կարգը | |
| • | Քվեարկության և ընտրությունների արդյունքներն ամփոփելու կարգը | |
| 4.4 | ՀՀ Նախագահի, ԱԺ պատգամավորների, համայնքի ղեկավարների և ավագանու անդամների ընտրությունները | |
| • | Ընդհանուր դրույթներ | |
| • | Թեկնածուների առաջադրումը և գրանցումը | |
| • | Թեկնածուների կարգավիճակը | |
| • | Նախընտրական քարոզչությունը | |
| • | Ընտրությունների արդյունքների ամփոփումը | |
| V. | ԿԸՀ որոշումներ | 4 |
| | Ստուգարք | |
| | *Ընդամենը* | 16 |

*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական բնապահպանական հանձնաժողովի*
*2005թ. դեկտեմբերի 21 -ի թիվ 50 -Ա որոշման*

# ԳՐԱՖԻԿ

## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

| *Դասընթացների մասնակիցներ* | *Դասընթացների անցկացման ժամանակահատվածը* |
|---|---|
| Տեղեկատվական բնապահպանական հանձնաժողովի ղեկավարներ | մինչև 2006 թվականի ապրիլի 1-ը |
| Ընդհանրապետական բնապահպանական հանձնաժողովների ղեկավարներ | մինչև 2006 թվականի ապրիլի 1-ը |
| Բնապահպանական հանձնաժողովների անդամության թեկնածուներ (բացառությամբ բնդհանրապետական և Երևան քաղաքի) *(Մասնագիտական դասընթացներին մասնակցելու դիմում ներկայացրած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ)* | մինչև 2006 թվականի դեկտեմբերի 20-ը |

*ՀԱՎԵԼՎԱԾ III*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

# ԴԻՄՈՒՄ

## Ընտրական ուսուցանող-կրթող դառնալու համար

Անուն

Ազգանուն

Հասցե

Հեռ

E-mail

Լուսանկար

Սեռ. Ար ☐ Իգ ☐

Ծննդյան ամսաթիվ---------- Ծննդյան վայր ----------

Քաղաքացիությունը:_____

Կրթություն (որակավորում) _____

Մասնագիտություն: _____

Ներկա զբաղմունքը_____

_____

- Ի՞նչ լեզուների եք տիրապետում (գրավոր և բանավոր)

| - Հայերեն | - Ռուսերեն | - Անգլերեն | Այլ_____ |
|---|---|---|---|
| ☐ վատ | ☐ վատ | ☐ վատ | |
| ☐ լավ | ☐ լավ | ☐ լավ | |
| ☐ գերազանց | ☐ գերազանց | ☐ գերազանց | |

- Երբևէ աշխատե՞լ եք ընտրական ոլորտում:

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

Եթե այո, խնդրում ենք պարզաբանել երբ և որտեղ, ինչպես նաև հակիրճ նկարագրել Ձեր կատարած աշխատանքը_____

_____

_____

_____

- Երբևէ աշխատե՞լ եք որպես ուսուցիչ, դասախոս կամ մեծահասակներին ուսուցանող (trainer):

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

Եթե այո, խնդրում ենք պարզաբանել ե՞րբ, ո՞րտեղ և ի՞նչ եք ուսուցանել_____

_____

_____

- Երբևէ քաղաքացիական կամ հասարակական գործունեություն ծավալե՞լ եք

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

Եթե այո, խնդրում ենք պարզաբանել ե՞րբ, ո՞րտեղ և ի՞նչ գործունեություն_____

_____

_____

- Արդյո՞ք նախընտրում եք թիմային, թե՞ անհատական աշխատանքը

_____

- Հայաստանի ընտրական ոլորտի ի՞նչ բարեփոխումներն եք առաջնահերթ համարում

_____

_____

_____

_____

- Պատրաստակամ եք արդյո՞ք պարտավորություն ստանձնել առնվազն 3 տարվա ընթացքում համագործակցել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ՝ որպես ընտրական հանձնաժողովների անդամների և անդամության թեկնածուների ուսուցանող-կրթող՝

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

- Պատրաստակամ եք արդյո՞ք ճամփորդել ՀՀ մարզերը՝ ուսուցողական դասընթացներ վարելու համար

ԱՅՈ ☐ ՈՉ ☐

*Ամսաթիվ:* *Ստորագրություն:*

**BRIDGE ծրագրի համառոտ նկարագիր**

BRIDGE-ը յուրահատուկ, նորարար և ճկուն ուսուցողական ծրագիր է ընտրական վարչարարությամբ զբաղվողների համար, որը թույլ է տալիս ոլորտի մեջ նոր ներգրավված մասնագետներին համապարփակ պատկերացում կազմել ընտրությունների մասին, իսկ փորձառու պաշտոնյաներին՝ նոր հորիզոններ բացել ընտրական սկզբունքներում: Այս ծրագրի հիմքում ընկած է մեծահասակների ուսուցանման մեթոդը, որտեղ մեծ տեղ է հատկացվում թիմային աշխատանքին և փորձի միջոցով ուսուցմանը:

**BRIDGE-ը բաղկացած է 2 հիմնական մասերից**

1. *Մոդուլներ /թեմաներ/, որտեղ ընդգրկված են ուսուցողական վարժություններ և BRIDGE դասընթացի նյութեր/ռեսուրսները: Հիմնական թեմաների ցանկը բերված է ստորև.*

   1. Ծանոթություն ընտրական վարչարարությանը
   2. Ընտրական համակարգեր
   3. Հանրային տեղեկատվություն
   4. Ընտրատարածքների սահմանագծում
   5. Ընտրողների գրանցում
   6. Թեկնածուներ
   7. Ընտրությունների նախապատրաստություն
   8. Քվեարկություն և ձայների հաշվում
   9. Ընտրական դիտորդներ
   10. Շարունակական ռազմավարություն

Եվս երկու թեմաներ նոր են կազմվել և կընդգրկվեն BRIDGE-ի ծրագրի արդեն երկրորդ հրատարակման մեջ

   11. Ընտրությունների մատչելիություն (հաշմանդամների, ծերերի, հղիների և այլ խոցելի խմբերի համար)
   12. Լրատվամիջոցները և ընտրությունները

2. *Դասընթաց ուսուցանողների համար*

Ուսուցանողների համար նախատեսված դասընթացը BRIDGE ծրագրի երկրորդ բաղկացուցիչ մասն է, որը կիրառում է ուսուցանիր ուսուցանողին մոդելը: Դասընթացի նպատակն է՝ որակավորել տեղական ուսուցանողների մեկ խումբ որպես BRIDGE-ի կրթողներ՝ տվյալ երկրում դասընթացաներ վարելու համար: 10 օրյա տևողությամբ այս դասընթացի նպատակն է BRIDGE–ի դասընթացների պոտենցիալ կրթողներին տրամադրել պրակտիկ հմտություններ և գիտելիք BRIDGE ծրագրի թեմաների և դրանց դասավանդման վերաբերյալ:

Ուսուցանողների համար նախատեսված դասընթացի նպատակն է՝

- ուսուցանողներին ուսուցանել BRIDGE–ի արդեն գոյություն ունեցող ծրագրի բովանդակությունը, նոր նյութերի մշակում, ինչպես նաև BRIDGE ծրագրի մեթոդոլոգիան
- Ուսուցանվողներին օգնել BRIDGE ծրագրի իրականացման փորձառություն տալով

- Ուսուցանվողներին հնարավորություն տալ փոփոխել գոյություն ունեցող BRIDGE ծրագիրը և կազմել նոր նյութեր
- Տրամադրել մեխանիզմ գնահատելու ուսուցանողների ունակությունները BRIDGE ծրագրի պահանջվող ստանդարտների համապատասխան՝ ծրագրի արդյունավետ իրականացման համար

Ազգային մակարդակով ուսուցանողների համար դասընթացները կազմակերպվում են այն երկրներում, որտեղ նախատեսվում է իրականացնել լայնածավալ BRIDGE ծրագիր (որի ժամանակ աշխատանքի կվերցվի ուսուցանողների խումբը): Միջազգային մակարդակով ուսուցանողների համար դասընթացները կազմակերպվում է առնվազն տարին մեկ անգամ, աշխարհի տարբեր մասերում, որտեղ հետաքրքրություն կա BRIDGE ծրագրի նկատմամբ կամ այն արդեն իրականացվում է:

Ուսուցանողները պատասխանատու են՝ ապահովելու BRIDGE-ի իրականացման որակը և ամբողջականությունը: Ուսուցանողները որակավորվում են հիմնադրող գործընկերների կողմից 4 մակարդականոց սանդղակով, որը գնահատում է ունակությունների և փորձի տարբեր մակարդակները:

Որակավորված ուսուցանող դառնալու համար դիմորդները պետք է հաջողությամբ ավարտեն երկու մասից բաղկացած հետևյալ ծրագիրը՝

1. Ֆորմալ մաս՝ ուսուցանողների համար նախատեսված 10-օրյա դասընթաց
2. Պրակտիկ մաս՝ կանկրետ որևէ ընտրված թեմայի ուսուցանում՝ արդեն որակավորված ուսուցանողի ղեկավարությամբ

ՀԱՎԵԼՎԱԾ V

## Ա. BRIDGE ուսուցանող-կրթողների որակավորման աստիճանակարգը

| Մակարդակ | Ինչ կարող են անել | Ով կարող է նրանց որակավորել | Չափանիշը |
|---|---|---|---|
| մակարդակ 1 | • կարող է BRIDGE դասավանդել առանց ղեկավարման<br>• ուսուցանել ուսուցանող-կրթողների (TtF)<br>• Որակավորել ուսուցանող-կրթողների | IDEA, AEC, UN-EAD | • Ընդունված է BRIDGE-ի երեք գործընկեր կազմակերպությունների կողմից (ներկայացնել CV + և նամակ երաշխավորագիր)<br>• Որպես 2-րդ մակարդակի ուսուցանող-կրթող դասավանդել է առնվազն 150 ժամ<br>• Ունի լայն ընտրական գիտելիք |
| մակարդակ 2 | • կարող է BRIDGE դասավանդել առանց ղեկավարման<br>• ուսուցանել ուսուցանող-կրթողների (TtF) | 1-ին մակարդակի ուսուցանող-կրթող | • Լրիվ հավատարմագրված ուսուցանող-կրթող է<br>• BRIDGE դասավանդել է առնվազն 150 ժամ<br>• լայն ընտրական գիտելիք |
| մակարդակ 3 | • կարող է BRIDGE դասավանդել առանց ղեկավարման<br>• ուսուցանել ուսուցանող-կրթողների (TtF) 1-ին կամ 2-րդ մակարդակի ուսուցանողի հետ միասին | 1-ին մակարդակի ուսուցանող-կրթող | • Լրիվ հավատարմագրված ուսուցանող-կրթող է<br>• BRIDGE դասավանդել է մինչև 150 ժամ |
| մակարդակ 4 | • կարող է BRIDGE դասավանդել առանց ղեկավարման | 1-ին մակարդակի ուսուցանող-կրթող | • Հաջողությամբ ավարտել է ուսուցանող-կրթողների ուսուցման (TtF) դասընթացը<br>• համատեղ դասավանդել BRIDGE-ի առնվազն 1 մոդուլ<br>• Որակավորվել է 1-ին մակարդակի ուուցանող-կրթողի կողմից |
| մակարդակ 5 | • կարող է BRIDGE դասավանդել ղեկավարմամբ | 1-ին կամ 2-րդ մակարդակի ուսուցանող-կրթողի հետ միասին | • Հաջողությամբ ավարտել է ուսուցանող-կրթողների ուսուցման (TtF) դասընթացը |

Բ. << ընտրական վարչարարության ուսուցանող-կրթողների որակավորման աստիճանակարգը

| Մակարդակ | Ինչ կարող են անել | Ով կարող է նրանց որակավորել | Չափանիշը |
|---|---|---|---|
| մակարդակ 1 | • կարող է առանց ղեկավարման ուսուցանել և որակավորել ուսուցանող-կրթողների<br>• ուսուցանել << ընտրական վարչակազմի բոլոր մակարդակներում | 1-ին մակարդակի BRIDGE ուսուցանող-կրթող | • BRIDGE ուսուցանող կրթողի առնվազն 3-րդ մակարդակ<br>• Ընտրական վարչակազմի ուսուցողական ծրագրի և նյութերի պատրաստման փորձ<br>• լայն ընտրական գիտելիք |
| մակարդակ 2 | • առանց ղեկավարման ուսուցանել << ընտրական վարչակազմի բոլոր մակարդակներում | 1-ին մակարդակի ուսուցանող-կրթող | • << տեղամասային ընտրական հանձնաժողովների դասավանդման առնվազն 50 ժամվա փորձ<br>• << ընտրատարածքային կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովներին ղեկավարումով դասվանդման առնվազն 50 ժամվա փորձ<br>• հաջողությամբ ավարտել է ուսուցանող-կրթողների ուսուցման դասընթացը և որակավորվել է<br>• լայն ընտրական գիտելիք |
| մակարդակ 3 | • առանց ղեկավարման ուսուցանել << տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին և անդամության թեկնածուներին<br>• ղեկավարումով ուսուցանել << ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամներին | 1-ին մակարդակի ուսուցանող-կրթող | • հաջողությամբ ավարտել է ուսուցանող-կրթողների ուսուցման դասընթացը և որակավորվել է |